

ՀԵՂԻՆԱԿԻ ==
== ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հ. Ա. Վ. Ե. Լ. Վ. Ա. Խ.

Հեղինակի իրավունքի վերս բերյալ
ո ռ ե ն ֆ ն ե ր ը

3-13382

Ա. ՑԵՍԱՏԱՆ

34778

ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

A 35520

Հ. Ա. Վ. Ե. Լ. Վ. Ա. Ծ

Հեղինակի իւավունիի վերքերյալ
ռ բ ե ն տ ն ե ր ը



15823 Հ. Ա. Վ. Ե. Լ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՅԵՆ ԱՐԴ-ԺՈՂՈՎԱԾԻ
Ց Կ Բ Կ Ա Խ 1985 թ.

Դաստիարակություն Ա 127 Ելեզար Ա առաջնորդ պատրիարք Ա 59. Յիշուա 503

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Կուլտուրական հեղափոխության խնդիրները պահանջում են հեղինակների գործունեյության խրախուսումը բոլոր տեսակի միջոցներով, ուստի խորհրդային որենսողությունը հեղինակի էռավունքն ընդունում և իր ամբողջ ծագալով։ Աշխատավորության զարգացող կուլտուրական պահանջները բաժարարենիւր համար, մեր որենսողությունը, հեղինակների գործունեյությունը խրախուսելու նպատակով, առաջ և նրանց եյական արտոնությունները Մեր որենսողությունը գրական, գեղարվեստական և պիտական սահմանադրությունը զարգացնելու համար, նպաստավոր պայմաններ ստեղծելու և հեղինակներին իրախուսելու խընդիրների հետ միաժամանակ, անհրաժեշտ պայմաններ և ստեղծում պիտության, գրականության և արվեստի յերկերը աշխատավորական լայն մասսաների սեփականությունը դարձնելու համար։

Կապիտալիստական սիստեմում մտավոր աշխատանքի արդյունքը դառնում և ապրանք, ընդ վորում՝ այդ յուրահատուկ ապրանքի տարածողը սովորաբար հանդիսանում և վոչ թե ընթաց հեղինակը, այլ կապիտալիստ հրատարակիչը վորը հեղինակներին վճարում և նվազագույն հռնարար և ինքը այդ գործարքից ստանում և մեծ ոգուատ։ Այսուղ հեղինակի իրավունքը դառնում և մտավոր աշխատանքի շահագործման ձեերից մեկը, վորը լայն շափով տարածված և կապիտալիստական յերկրներում։ Այդ պայմաններում ի հորկե, դժվար և խոսել մտավոր «ազատ» ստեղծագործության մասին, առավել ևս, յեթէ նկատի ունենանք, վոր կապիտալիստական ներկա սիստեմում հեղինակի իրավունքի ուսուրումը խոշոր կապիտալիստական հրատարակչություններին ավելի յև տարածվում, վոչ միայն հեղինակի ներկա յերկերի, այլև նրա ապագա աշխատանքների վրա։ Այսուղ ունենք մուգոր աշխատանքի արտադրանքի յուրահատուկ ոկտնաբակալազիա։

Հեղինակի իրավունքի հարցերը մեղ մոտ՝ զնալով ազելի և

ավելի ակտուալ են դառնում վոչ միայն հեղինակների և հրատարակիչների, այլ նաև աշխատավորների և խորհրդային հասարակության լայն զբանների համար։ Մի կողմէց այդ մեծ հետաքրքրությունը դեպի հեղինակի իրավունքի հարցերը և մյուս կողմից՝ հեղինակի իրավունքի մասին հայերեն լեզվով սիստեմատիկացնելու յիշարկած որևէնսկրության հավաքածույթի բացակայությունը պատճառ հանդիսացան, վոր Արդմողկոմատը ձեռնարկի այս ըրույնուրի հրատարակությանը։

1. ՀԵՂԻՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

ԽՍՀՄ-ում հեղինակի իրավունքի ինստիտուտի դարգացման համառու պատմությունը հետևյալն էր—

1917 թ. դեկտեմբերի 29-ին լույս անսալ ՌԱՖԱՀՀ-ի կառավարության առաջին դեկրետը՝ պետական հրատարակչության մասին (Որենքների Ժողովածու, 1918 թ. № 14, հոդ. 201). Այդ դեկրետը իրավունք տվեց՝ ազգայնացնելու այն ըուլոր հեղինակների յերկերը, վարոնց վերաբերմտմբ հեղինակի իրավունքի ժամանակը լրացնել եր, նպատակ ունենալով գրականության կլասսիկների և զեղարվեստագետների աշխատանքները հրատարակել հժամանակին հրատարակությամբ կամ ձրի։ Այդ դեկրետի հիման վրա 60 հեղինակների յերկեր հայտարարվեցին վորպես պետության մենաշնորհ՝ 5 տարի ժամանակով։ Հետագայում, 1918 թ. նոյեմբերի 26 ի դեկրետով Լուսժողկումաթին իրավունք վերապահվեց՝ ամեն մի յերկ հայտարարել պետության ունիականությունը՝ վերահաստարակման համար։ Զաղգայնացված յերկերի համար մնում եր արտատպության ազատությունը՝ հեղինակի կենդանության ժամանակ, բացառապես հեղինակի հետ համաձայնության գալու միջոցով։ Զաղգայնացված յերկերի համար, հեղինակին կենդանության ժամանակ տրվում եր հոնարար հառաւել դրույթներով, իսկ մահացած հեղինակների ժառանգների վերաբերյալ սահմանվեց ապահովություն ի հաշիվ այդ հոնարի։

Նրանից հետո, համաձայն ՌԱՖԱՀՀ կառավարության 1919 թ. հոկտեմբերի 10-ի վորոշման, բոլոր այն պայմանագրերը, վարոնք հրատարակչությունները կնքել եյին հեղինակների հետ և վորոնց հիման վրա նրանց գրական, գեղարվեստական և յերաժշտական յերկերն անցյալում անցել եյին հրատարակչություններին վորպես նբանց սեփականությունը, հայտարարվեցին անվագեր և վերացվեցին Նման զայմանագրերը դեկրետը հայտարա-

բարեց ստուկացուցիչ և արգելեց, Հետագայում հեղինակի հետ դրավոր պայմանագիր կնքելու կարգը սահմանվեց: Պայմանագրում ցույց եր արգում տպադրվող յերկի տիրամի քանակը՝ վարձատրությունը սահմանված տարինից ցածր չպետք է լիներ) և հրատարակության իրավունքից ոգուվելու ժամանակամիջոցը: Հեղինակի իրավունքի վերաբերյալ ԽՍՖՀՆՀ-ի վերոհիշյալ ամբողջ որենսգրությունը, համաձայն Հայաստանի Հեղինակի 1920 թվի դեկտեմբերի 21-ի ընդհանուր վորոշման, տարածվեց նաև ՀՍԽՀ-ի սահմաններում, քանի վոր Հեղինակի այդ վորոշմամբ, ԽՍՖՀՆՀ-ի ամբողջ որենսգրությունը պարտադիր համարվեց ՀՍԽՀ-ում, այն լրացումներուվ և փոփոխություններով, վորոնք հետապայում այդ որենսգրության մեջ կմտցներ ՀՍԽՀ-ի կառավարությունը (1920 թ. պլրակ 1. ին, հոդ. 39):

Հեղինակի իրավունքի մասին միութենական որենքն առաջին անգամ հրատարակվեց ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկումխորհի կողմից 1925 թ. հունվարի 30-ին, վորը ամբողջ Միության մեջ կիրառվեց մինչև 1928 թ. (ԽՍՀՄ Որենք. և հարդադրություն. Ժողովածու, 1925 թ. № 7, հոդ. 66 և 67):

Ներկայումս մեզ մոտ հեղինակի իրավունքի վերաբերյալ դործում են հետեւյալ որենքները՝

ա) ԽՍՀՄ-ի հենտգործկոմի և Ժողկոմխորհի 1928 թ. մայիսի 16-ի «Հեղինակի իրավունքի հիմունքների մասին» վորոշումը (Որենքների և Կարգադրությունների Ժողովածու, 1928 թ. № 27, հոդ. 245 և 246),

բ) ՀՍԽՀ-ի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. վետքրարի 10-ի «Հեղինակի իրավունքի կանոնադրության մասին» վորոշումը (Որենքների և Կարգադրությունների Ժողովածու, № 2, հոդ. հոդ. 34—35), վորը հրատարակված և հեղինակի իրավունքի հիմունքների մասին միութենական որենքի հիման վրա:

Դրաւյիկի վերջում, վորպես նավելված արվում և ներկայումս հեղինակի իրավունքը կարգավորող վերը հիշված ամբողջ որենսգրությունը և այդ պատճառով այստեղ առանձնապես կանոք չենք առնում նրանց վրա, վոյցիկետև այս գրքույկը կազմված եղիւավորապես, այդ որենքների և մի շարք պաշտօնական պարագաներությունների ու հրահանգների հիման վրա:

2. ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈԲՅԵՏԸ

Մ էղ մոտ հեղինակի իրավունքը տարածվում և դրականության, պիտության և արգելութիւն յերկերի համարյա ըոլոր տեսակների վրա, անկախ նրանց սահղուման յեղանակից ու ձեերից և նրանց արժեքից ու նպատակից, այն և՝

- ա) բանավոր յերկերի (հառեր, դասախոսություններ և այլն),
- բ) զրավոր յերկերի (զրքեր, հոգվածներ, ժողովածուներ և այլն),

շ) զրամատիկական և յերաժշտական-դրամատիկական,

դ) թարգմանությունների,

յ) խորեոգրաֆիկ յերկերի և միջախաղերի (պանտոմիմա) մրա, վրանց բնմակատարման վերաբերմասր կան դրավոր կամ այլ ձևով շարադրված ցուցումներ,

զ) կինեմատոպրաֆիկ սցենարիանների,

և) յերաժշտական յերկերի վրա՝ տեքստով կամ առանց տեքստի,

ը) նկարների, իլլուստրացիանների վրա, նկարչական արվեստի, քանդակագործության, ճարտարագիտության և գծառ նկարչական գործերի վրա,

թ) աշխարհագրական քարտեզների,

ժ) պլանների, եսկիզների և պլաստիկ գործերի վրա, վորոնք վերաբերում են դիտություններին, տեխնիկային կամ դրամատիկական կամ յերաժշտական-դրամատիկական յերկերի բնմագրությանը,

ի) կինո-ֆիլմերի վրա,

լ) լուսանկարչական կամ համանման յեղանակով ստացած գործերի վրա և այլն:

Հեղինակի իրավունքը կայանում է նրանում, վոր վորեայ յերկի հեղինակին իրավունք և արվում իր անունով կամ պայմանական անունով (պահպոնիմ), կամ առանց անունը նշանակեալու (անունիմ) լույս ընծայելու յերկը, սահմանված ժամանակի ընթացքում տարածելու այն, ինչպես նաև որենքին չհակասող բոլոր յեղանակներով նյութական շահ ստանալու իր այդ իրավունքից:

Հեղինակի իրավունքը հանդիսանում է բացառիկ իրավունք: Հեղինակը կամ նրա իրավահաջորդը միայն իրավունք ունեն հեղինակի յերկը տարածելու և նրանից ոգտվելու, բացառությամբ

որենքով նախատեսված զեղչքերից։ Հեղինակի այդ իրավունքին համապատասխանում ե այլ անձանց պարտավորությունը՝ ձևանապահ մնալ հեղինակի իրավունքի խախտումից, սակայն հեղինակի իրավունքը կարող ե, առանց հեղինակի և նրա իրավահայոցը համաձայնության, հարկագիր կարգով դնվելու։ Այդ դնումը կարող ե անդի ունենալ բացառապես ՀՍԽՀ ժողկումլուր հի վորոշմամբ Նման դեպքում հեղինակին կամ նրա իրավահայոցին վճարելիք վարձատրության չափը վարորում ե ՀՍԽՀ Հուսժողկումատը, համաձայնեցնելով այն ՀՍԽՀ միջնժողկումատի հետ։

Ինչպես արդեն տեսանք հեղինակի իրավունքի նպատակն ե՝ պաշտպանել հեղինակի նյութական շահերը, վերապահելով նրան իր յերկը հրապարակելու և տարածելու բացառիկ իրավունք։

Մեր իրավունքը պաշտպանում ե պահանջմանը միայն հեղինակի նյութական, այլև նրա զուտ անձնական շահերը։ Հեղինակի իրավունքը պաշտպանվում ե նաև այն դեպքերում, յերբ իրավունքի խախտման հետ վորոշակի նյութական շահեր չեն կտրված (հոդված 49)։ Հեղինակի այդ տեսակի անձնական շահերի կարգին կարելի յե դասել հեղինակի այն իրավունքը, որը ուստիշները առանց նրա գիտության իրավունք չունեն հրապարակել հանելու նրա չհրապարակված յերկը, կամ ուրիշի անունով հրատարակելու այն, կամ ընդհակառակը՝ ուրիշի յերկը նրա անունով հրատարակելու, նրա իրավունքը՝ արգելել ամեն մեկին նրա յերկի մեջ փոփոխություններ և աղավաղումներ մտցնել, նրա պսեվդոնիմը կամ անոմիմը յերեւան հանել և այլն։ Այս բայց պեղպերում հեղինակը իրավունք ունի իր անձնական շահերը խախտողից պահանջելու, վորպեսզի նա կատարի իր խախտված որինական շահերը բավարարելու համար անհրաժեշտ դրամությունները, Այդ դեղքերում հեղինակին իրավունք ե վերապահվում բողոք ներկայացնելու դատական մարմիններին։ Հեղինակի իրավունքի բովանդակության այս ընդհանուրը բնորոշումն իր մեջ պարունակում ե մասնավորապես հեղինակի կողմից իր յերկը վերամշակելու իրավունքը, այսինքն՝ իր յերկը նույն բավանդակությամբ, փոփոխված ձևով վերաբարելու իրավունքը։ Որինակ՝ իր յերկը պատմողական ձերից դրամատիկականի և ընդհակառակը վերածելու, իր յերկը կինոնկարների, յերաժշտական-

շըրամատիկական և այլ յերկերի համար վերամշակելու իրավունքը
և այլն:

Եթեամշտական յերկերի վերաբերմամբ հեղինակի իրավուն-
քի մեջ մտնում և յերաժշտագնատի իրավունքը՝ իր յերկը առան-
ձին գործ իրների, ամրող նվազախմբի համար, մի կամ մի քանի
ձայների, յերածելու իրավունքը և այլն:

Այսպիս և հեղինակի իրավունքի բովանդակությունը գրա-
կան իմաստով: Մյուս կողմից որենքում հիշատակված վորոշ
դիմքերում հեղինակի իրավունքը սահմանափակվում է, այսինքն
թույագարվում և կողմանակի անձանց ոգտվելու ուրիշի յերկերից:
Որինակ՝ հեղինակի իրավունքի 9-րդ հոդվածի համաձայն հեղի-
նակի իրավունքի խախոռում չի համարվում ուրիշի յերկի թարգ-
մանությունը մի այլ լեզվով ուրիշի գրական յերկից վերցրած
աներսոր կոմպոզիտորի կողմից իր յերաժշտական գործի համար
սպասարկումը, յեթև այդ յերկի հեղինակն իր յերկի յուրա-
քանչյուր որինակի վրա ոգտագործման արգելութի մասին հիշա-
տակություն չի արել և, այլն (մանրամասն տես ՀՍԱՀ հեղինակի
իրավունքի կանոնագրության 9-րդ հոդվածը, հավելված № 2):

Ինչպիս վերևում հիշատակեցինք, մեր որենքը հրաժարվեց
թարգմանության իրավունքը հեղինակի իրավունքի բաղկացու-
ցիչ մասը հանաչելուց և ուրիշի յերկի թարգմանությունը չի հա-
մարդում հեղինակի իրավունքի խախոռում: Այսպիսով մեր որեն-
քը, հակառակ բուրժուական որենսդրությունների մեծամասնու-
թյան, սահմանում և թարգմանության աղատության սկզբանքը:
Այս հանգամանքը մեզ համար ունի խօշոր նշանակություն, քա-
նի վոր մի կողմից այդ մեջոցով հնարավորություն և ստեղծվում
ԱՍՀՄ բազմազգի ընակլության կուլտուրական պահանջները բա-
վարաբերու և մյուս կողմից թարգմանության աղատությունը
հեշտացնում և ԱՍՀՄ-ի աղջերի միջն դրական, դեղարվեստական
և դիտական հարստությունների փոխադարձ փոխանակությունը:

Այդ վերաբերում և հատկապիս մանր աղդություններին,
վորոնք անցյալում կուլտուրապիս հետամեաց են յեղել և ԽՍՀՄ-ի
մեծ ու մատադրապիս ավելի զարդացած աղդությունների յեր-
կերի իրենց մայրենի լեզվով մեծ կարիք են զգում: Ինչ վերա-
բերում և ոտարյերկրյա հեղինակների թարգմանության աղա-
տությանը, աղա հեղինակի իրավունքի պաշտպանության խնդ-
րում, ոտարյերկրյա հեղինակներին մենք չենք կարող ավելի
շատ իրավունքներ տալ քան թե ունեն մեր հեղինակները:

Թարգմանիչն իր թարգմանած յերկի նկատմամբ ձեռք և բերում է նեղինակի իրավունք և նրա, վորպես հեղինակի իրավունքը պաշտպանվում և նույն հիմունքներով, ինչ հիմունքներով վոր պաշտպանվում և ինքնուրույն ստեղծագործության հեղինակի իրավունքը Այստեղ կարող ե առաջանալ այն հարցը, թե մեքանի թարգմանության գոյության դեպքում, նույն յերկի 2-րդ, 3-րդ թարգմանությունները արդյոք չեն համարվում առողջին թարգմանչի հեղինակի իրավունքի խախտում։ Այս հարցին պետք ե տալ բացասական պատասխան։ Թարգմանության արվեստը կատարելագործելու համար և նպատակ ունենալով թարգմանության բնագավառում մաքսիմալ նվաճումներ ձեռք բերել, մենք պետք ե քաջալերենք նոր և ավելի կատարելագործված թարգմանություններ։ Թարգմանությունը չի համարվում զուտ մեխանիկական աշխատանք, մատչելի բոլոր նրանց համար, ովքեզ յիշվին տիրապեսում են բնագրի և թարգմանության լեզվին։ Մեծ մասամբ թարգմանության, հատկապես գեղարվեստական յերկի լավ թարգմանության համար պահանջվում ե, բացի լեզվից, նաև թարգմանչի գեղարվեստական նաշակը։ Պաշտոնից Սալթիկով՝ Շչեղրինի, Դոստանեսկու կամ մի ուրիշի թարգմանության համար բավական չե միայն տիրապետել լեզվին, որպահնչվում ե նաև թարգմանչի գեղարվեստական նաշակը և կուլտուրականությունը։ Նույնը պետք ե ասել նաև մարգարղմի կլասսիկների թարգմանիչների համար։

3. ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԸ

Հեղինակի իրավունքի սուրյեկտն ամենից առաջ հանդիսանում ե այն անձը, վորի ստեղծագործության արդյունք և դրական, գեղարվեստական, գիտական յերկը։ այդ աշխատության հեղինակը հանդիսանում և այդ իրավունքի սկզբնական տիրապետողը։ Հեղինակի իրավահաջորդները (ժառանգները հարատարակիչը) սպառվում ին հեղինակի ածանցական իրավունքով, բնոր վորում, նրանց իրավունքը սահմանափակվուծ և վորոշ ժամանակամիջոցով, վորի լրանալուց հետո այդ իրավունքը վերջնականապես դադարում ե, մինչդեռ սկզբնական հեղինակի իրավունքը ցման և (ժանրամասնորեն տես 4-րդ զլառում)։

Հեղինակի իրավունքը կարող և պատականել մի քանի հեղինակների՝ վորպես յերկի ստեղծագործության համահեղինակների։ Այս գեղարվում հեղինակի իրավունքը պատկանում և բոլոր

համահեղինակներին, անկախ նրանից; թե հավաքական յերկը կտպմում և մի անրաժանացություն, թե բաղկացած և ինքնուրույն նշանակություն ունեցող մասերից; Այս դեպքում համահեղինակների փոխարարերությունները վարչվում են նրանց համաձայնությամբ, Համահեղինակների մեջ հատուկ համաձայնության բացակայության դեպքում, համաձայն ընդհանուր սեփականության իրավունքի կանոնների, յերկից ոգովելու, յերկի վերաբերյալ կարգադրություններ անելու և նրանից շահ սահանալու իրավունքը հավասար չափով պատկանում է բռնուր համահեղինակներին: Հավաքական յերկի համահեղինակներից յուրաքանչյուրը կարող է հեղինակի իրավունք վայելել յերկի իր մասի վերաբերմամբ միայն այն դեպքում, յեթե այդ մասն ունի ինքնուրույն դիտական, գրական կամ դեղարվեստական նշանակություն, և յեթե համահեղինակների մեջ այլ համաձայնություն չի նախատեսված: Որինակ՝ հնարավոր և պատրաստել արձան, յերբ պատվանդանը պատրաստում և մի քանդակապործ վորը ներկայացնում է ինքնուրույն գեղարվեստական արժեք, իսկ արձանի անդրին՝ մի ուրիշը և այլն: Մի քիչ բարդ ե խընդիրը կինոժամապավենի նկատմամբ: Կինոժամապավենը հանդիսանում է բաղմաթիվ անձանց՝ սցենարիստի, ռեժիսորի, ոպերատորի, դերասանների և ուրիշների կողեկատիվ աշխատանքի ստեղծագործություն:

Վերոհիշյալ բոլոր անձինք համարվում են արդյոք կինեմատոգրաֆիկ յերկի համահեղինակներ և վորոն չափով նրանց պատականում են արդյոք հեղինակի իրավունքներ՝ կինոժամապավենի նկատմամբ: Թեպետ վերոհիշյալ անձանց նշանակությունը հատկապես ուժի մեջ գործում է կինեմատոգրաֆիկ յերկու ստեղծագործությունի սցենարիստին՝ սցենարիստին և կինոժամապավենը արտադրող՝ կինո արտադրական ձեռնարկությանը: Առաջին դեպքում սցենարիստն ստանում է կինո սցենարիստի հեղինակի իրավունք այն բոլոր հետեւանքներով, վորպիսիք բղխում են այդ իրավունքից, իսկ կինոժամապավենի հեղինակի իրավունքը մնում է այդ ժապավենն արտադրող կինո արտադրական ձեռնարկությանը: Մասցայալները (ռեժիսորը, ոպերատորը, զերասանները և ուրիշները) կինոժամապավենի նկարահանությանը մասնակցելու համար, կարող են վարել պահանջ ներկայացնել միայն աշխատանքի մեջ:

առանքային պայմանագրի հիման վրա և վոչ թե հեղինակի իրաւունքի:

Հեղինակի իրավունքի սուրյեկտը վորոշելիս, նշանակություն ունի հեղինակի քաղաքացիությունը և յերկի հրատապակման տեղը:

Մեր որենքը առաջին հոդվածով ճանաչում և բոլոր հեղինակների և նրանց իրավահաջորդների իրավունքը ԽՍՀՄ-ի սահմաններում լույս տեսած, կամ ձեռագրի, նսկիզի կամ այլ որյեկտիվ ձևով գտնվող յերկերի վերաբերմամբ, անկախ նրանից, թե հեղինակը և նրա իրավահաջորդներն ի՞նչ քաղաքացիության հն պատկանում: Հեղինակի իրավունքի այսպիսի լրիվ հավասարությունն իր յերկերի և ստարյերկրյա քաղաքացիների միջև սահմանված և վոչ բոլոր ստարյերկրյա որենսղրություններով: Խորհրդային քաղաքացի հեղինակը և նրա ժառանգները ստարպետության մեջ լույս տեսած, կամ ձեռագրի, նսկիզի կամ այլ որյեկտիվ ձևով ստարպետության տերիտորիայում գտնվող յերկերի վերաբերմամբ ԽՍՀՄ-ի սահմաններում հեղինակի իրավունքի պաշտպանություն ևն վայելում անկախ այն հանդաւանքից, թե այդ պետության և ԽՍՀՄ-ի միջև դրյալներուն ունի համապատասխան համաձայնություն, թե վոչ: Ի՞նչ վերաբերում է հեղինակի իրավահաջորդներին, նրանք ըացի ժառանգներից, վերոհիշյալ յերկերի վերաբերմամբ ԽՍՀՄ-ի տերիտորիայում հեղինակի իրավունքի պաշտպանություն չեն վայելում: Արտասահմանում լույս տեսած, կամ ձեռագրի, նսկիզի կամ այլ որյեկտիվ ձևով արտասահմանում գտնվող յերկերի վերաբերմամբ, յեթե հեղինակը խորհրդային քաղաքացի չե, առա նրա հեղինակի իրավունքը մեզ մոտ ճանաչվում և միայն ԽՍՀՄ-ի և համապատասխան պետության միջև հատուկ համաձայնություն դրյալներուն ունենալու դեպքում և միայն այդ համաձայնություն սահմաններում: Այդ կարգը համապատասխանում և ՀՍԽՀ-ի Քաղ. Ռենսգրքի կիրարկման մասին վարոշման 8-րդ հոդվածին, վորոշյան առաջ պետությունների քաղաքացիների իրավունքը, վորոնց հետ ԽՍՀՄ մտել և այս կամ այն համաձայնությունները, վորոնց հետ ԽՍՀՄ մտել և այս կամ այն համաձայնություններով:

Ինչպես տեսնում ենք, ստարյերկրյա հեղինակների իրավունքների պաշտպանությունը վորպիս ընդհանուր կանոն, որին չեն սահմանված և այդ պաշտպանության ու նրա սահման-

հերբ հարցի լուծումը թաղնվում է այս կամ այն պետության
հետ կորուս միջազգային համաձայնություններին:

Առարյանքիրյա քաղաքացի հեղինակների իրավունքի պաշտուածության դիմումը հարցը, վերով նրանք ամենից ավելի յեղանագործած, զա նրանց յերկի թարգմանության վերաբերյալ իրենց ունեցած հեղինակի իրավունքի հարցն է: Այս հարցում կարող են դրաշ գովարություններ առաջանալ, քանի վոր հեղինակի իրավունքի մեր որենքով թարգմանության իրավունքը չեմանում հեղինակի իրավունքի կազմի մեջ, և ուրիշի յերկի թարգմանությունը այլ լեզվով՝ հեղինակի իրավունքի խախտում չեամորված:

Այս հարցը, թե անգործունակ հեղինակները (18 տարիեկանից դրա անձինք և հոգեկան հրվանդները) կարող են արգյունացինակի իրավունքի սուրյեկտներ լինել, —պետք և լուծվի դրա կան իրաւուավ, քանի վոր նրանք հանդիսանում են յերկի ստեղծագործողները, սակայն ընդհանուր քաղաքացիական որենքի հիման վրա, նրանց հեղինակի իրավունքի աշաշապանությունը և այդ իրավունքի անորբինությունը իրականացվում և նրանց հոգաբարձուների և խնամակալների կողմից (ՀՍԽՀ Քաղ. Որենսգր. հոդ. 7—10): Տարօրինակ կլիներ որինակ՝ 6 տարիեկան հասակում ինքնուրացյան յերկ ստեղծող Մոցարտին իր ստեղծագործության վերաբերմանը հեղինակի իրավունքի սուրյեկտ չնախաչները, մանավանդ պրոլետարական դիկտուրայի պայմաններում, յերբ Խորհրդային իշխանությունը բոլոր միջոցներով սմանդակում և իրախուսում և յերիտասարդության ինքնուրացյան ստեղծագործությունը:

4. ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ, ԱՆՑՈՒՄԸ ՅԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Ինչպես ասացինք, հեղինակի իրավունքը՝ յերկի նկատմամբ և անհաջում և հենց յերկը ստեղծելու վաստի հիման վրա: Հեղինակի իրավունքը ծագում և յերկը ստեղծելու մոմենտից, անկախ նրանից, թե այդ յերկը կգտնվի հրապարակված թե չիրապարակված վիճակում կամ ձեռագիր, եսկիզ կամ այլ որյեկտի վիճակում:

Հեղինակի իրավունքի ճանաչման համար չի պահանջվում մորեն ասմարագրություն կամ վորեկցն ձևականություններ, կամ թի հատուկ պրոցեսուրայի կատարում՝ հեղինակի կողմից: Ցեր-

Հի հեղինակները և նրանց ժառանգները կարող են տուժարապրել Հուօծողկոմատում իրենց յերկի լույս տեսնելու, կամ առաջին հրապարակային կատարման, կամ առաջին հրապարակային ցուցադրման ժամանակը։ Տոմարագրման մերժումը շահագրկոված անձանց չի զրկում յերկի հրատարակության ժամանակը այլ յեղանակներով ապացուցելու իրավունքից։

Յերկի տուժարապրումը արգելք չի հանդիսանում յերբորդ անձանց համար՝ տոմարագրված յերկի վերաբերմամբ հեղինակի իրավունքի մասին վեճ հարուցելու, վորպիսի հարցը պետք է լուծում ստանա դատական կարգով։

Հրատարակված յերկի վրա հեղինակի անվան նշանակումը արդեն հանդիսանում եւ ապացույց, վոր այդ յերկը պատկանում է այն անձին, վորը իրեն հայտարարում է այդ յերկի հեղինակը, սակայն այդ փաստը չի կարող ծառայել վորպես անվիճելի ապացույց և չի բացասում հեղինակի իրավունքի, ինչպես նաև յերկի վրա ցույց տրված անձի իրավունքի դեմ առարկելու հարագորությունը։ Այս գեղցում առարկադ անձը պետք է դատական կարգով ապացուցի իր՝ հեղինակի իրավունքը։

Հեղինակը իր իրավունքը ամբողջովին կամ մասամբ կարող է զիջել մի ուրիշին՝ հրատարակչական պայմանագրով (մի կամ մի քանի հրատարակության համար), բեմակատարման պայմանագրով (մի կամ մի քանի ներկայացումների համար), իսկ զեղարվեստական յերկերի նկատմամբ վորոշ գեղարվեստական ձևով կամ վորոշ յեղինակով վերաբարեկելու պայմանագրով։

Հեղինակի իրավունքը բացի ստարհան կարգով ուրիշին անցնելուց, կարող ե նաև ժառանգության և կատակի կտրդով անցնել ժառանգներին, բայց ժառանգները և հեղինակի իրավունքը ձեռք բերողները այդ իրավունքից կարող են սպավել վորոշ ժամանակի ընթացքում, վորը սրբնքով սահմանված և հեղինակի իրավունքի տևողության համար։

Ա. Հրատարակչական պայմանագիր

Հեղինակի իրավունքը սահմանվում է հրատարակչան պայմանագրի կնքման ձևով։ Համաձայն հեղինակի իրավունքի կանոնադրության 16-րդ հոդվածի, հեղինակի իրավունքի ստարհան վերաբերյալ պայմանագրի պետք է կնքվի դրավոր ձևով։ Այդ պայմանագրի նոտարական վավերացումը չի պահանջվում։ Նույն հոդվածի ծանոթության համաձայն պայմանագրի

պրագոր ձեմ պարտադիր չե այն պայմանադրերի համար, վռարունք կնքվում են պարբերական հրատարակություններում և հանրագիտական բառարաններում տպվելիք յերկերի վերաբերմամբ՝ հեղինակի իրավունքը ուստարելու դեպքում։ Այս դեպքում թեև դրավոր պայմանագրի կնքումը պարտադիր չե, սակայն կողմերը բանագոր համաձայնության այս կամ այն կեար առնիվ հետադա վեճերի հնարավորությունը նկատի ունենալով, կարող են դրավոր պայմանագրի կնքել։ Հանրագիտական բառարանների համար պայմանագրի դրավոր ձեմ պահպանումը պետք է համարել ամելի նորատակահարժար։ Այն դեպքում, յերբ հեղինակի իրավունքի ուստարման համար պահպանվում է պայմանագրի պարտադիր դրավոր ձեմ, այդ ձիվ չպահպանելը հիմք չի ծուսայում հրատարակչական պայմանագրին անվավեր հանաչենու համար, այլ միայն դրկում և կողմերին՝ ի հաստատություն պայմանագրի, վկաների ցուցմունքների վրա հիմնվելու իրավունքից, սակայն նրան չի դրկում դրավոր ազացույցներ բերելու իրավունքից (դրություններ, նամակներ և այլն)։

Մի շանի խոսք նաև հրատարակչական պայմանագրի բովանդակության մասին։

Մեր որենքի 17-րդ հոդվածը տուիս և հրատարակչական պայմանագրի հետեյալ բնորոշումը՝ «Հրատարակչան պայմանագրի և համարվում այն պայմանագիրը, վորի դորությամբ հեղինակը վորոշ ժամանակով դիջում և որյեկտիվ ձև ստացած իր յերկը հրատարակելու և տարածելու բացառիկ իրավունքը, իսկ հրատարակիչը պարտավորվում է հիշյալ յերկը լույս ընծայել իր միջոցներով և ձեռք առնել իրենից կախված միջոցներն այն ատարածելու համար»։ Թույլ և արդում հրատարակչական պայմանագիրը կնքել այնպիսի յերկերի վերաբերմամբ, վորոնք պայմանագիրը կնքելու պահին դեռ որյեկտիվ ձև չեն ստացել (դրակառ պատվերներ)։

Այն հեղինակը, վորը հրատարակչական պայմանագրով դիշել է հեղինակի իրավունքը, նույն ժամանակամիջոցում իրավունք չունի այդ իրավունքը գիծելու այլ անձանց։ Հեղինակի կողմից հրատարակչական իրավունքը յերկու կամ ավելի հրատարակչությունների գիծելու զեագում, համաձայն ՀՍԽՀ Բաղ. Որ. 120-րդ հոդվածի իմաստի, հրատարակչության իրավունքը համարվում է դիշված այն հրատարակչության, վորը առաջինն է պայմանագիր կնքել։ Մի գեղագում հեղինակը չի պրկված իր՝

Հեղինակի իրավունքն այլ անձանց դիջելու իրավունքից, յեթև
նույնիսկ արդեն այդ իրավունքը ուրիշին դիջելու վերաբնույալ
գոյություն ունի նրա էուղմից կնքված հրատարակչական պայ-
մանագիրը: Այդ կարող և տեղի ունենալ այն դեպքում, յերբ հե-
ղինակը պայմանագիր է հնագում իր յերկերի լիակատար ժողո-
վածույի հրատարակության համար: Այդ դեպքում հեղինակը ի-
րավունք ունի լիակատար ժողովածուի մեջ մտցնելու այն յեր-
կերը, զորոնց հրատարակություն իրավունքը նա արդեն դիջել էր
այլ անձանց: Հրատարակչական պայմանագրի բովանդակության
վերոհիշյալ ընորոշման մեջ փայլուն կերպով արտահայտված և
հեղինակի իրավունքի վերաբերյալ մեր որենքի հեղինական պա-
ղափարը՝ ուժեղացնել հեղինակի շահերի պաշտպանությունը:
Այդ միտքն և արահայտված հեղինակի իրավունքի 17-րդ հոգ-
վածում, զորտեղ ասկած և՝ «հրատարակիչը պարտավոր և յերկը-
լույս ընծայել իր միջոցներով և ձեռք առնել իրենից կախված
միջոցներն այն տարածելու համար» ինչպես ուենուում ենք, մեր
որենսդրությամբ հրատարակիչը հեղինակի առաջ պատասխա-
նառու յեղանուած հենց այն հանդամանքի համար, զոր անհրա-
մեշտ միջոցներ ձեռքի չի առնեւած հեղինակի յերկը առարծելու-
համար: Հեղինակի համար, թեկուղ և իր հոնարարը լրիվ սահ-
պած, մինույնը չն թե իր աշխատանքը հրատարակչի պահես-
տում կմնա անշարժ վիճակում, թե կատարածիի հնչանեա վերեւում
հիշատակեցինք, որենքը պաշտպանում և վահայն հեղինակիի
նյութական, այլ և նրա անձնական շահերը: Որենքի 18-րդ հոգ-
վածում նախատեսված են հրատարակչական պայմանագրի պար-
տադիր կետերը: Հրատարակչական պայմանագրում, որինակը-
պետք և նախատեսված լինի առաջինը՝ հրատարակություն և
իրաժը, իսկ յեթե պայմանագրով մի քանի հրատարակությունն
նախատեսված, ապա նուև հետագա հրատարակությունների ախ-
րաժը, յերկը լույս ընծայելու ժամանակամիջոցը, հեղինակիի
արքող հոնարարի չափը, հրատարակչական պայմանագրի ժամա-
նակամիջոցը: Եեթե հրատարակչական պայմանագրով չի նախա-
տեսված, վոր հրատարակչությունն իրավունք ունի յերկը վերա-
հրատարակելու, այդ դեպքում հրատարակությունը կարող և
յերկը վերահրատարակել միայն այն դեպքում, յերբ կստանա-
դրա համար հեղինակի գրափոր համաձայնությունը: Նույն որենք-
ի 26-րդ հոդվածը կուժողկոմատին իրավունք և վերապահում՝
հրատարակել տիպային հրատարակչական պայմանագիր գրտեկան:

(վորի թշուամ նուև դիտական և հրապարակախոսական), յերաժշգնական և յէրաժշգնական դրամատիկական յերկերի համար: Այսուհետ են որենքը իր պաշտպանության տակ և առնում հեղինակաների իրավունքները, քանի վոր համաձայն նույն 26-րդ հոդվածի՝ հրամարակական պայմանադրի այն պայմանները, վորոնց տիպային պայմանադրի պայմանների համեմատությամբ վատթօրացնում են հեղինակների իրավունքները, համարվում են անգույներ, իսկ կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուրդ դիպլոմ վորոշվում են արագային պայմանագրի համար:

Հրամարակական պայմանադրի կնքումը խոչոր նշանակության տնի հեղինակի և հրամարակչի իրավունքներն ու պարտականության ներքության ներք ճշորեն վորոշելու և կոնկրետացնելու համար, և միաժամանակ հանդիսանում են հեղինակի նորմալ ստեղծագործական աշխատանքի համար անհրաժեշտ նյութական պայմանները ապահովելու մի միջոց՝ դրական, զիտական և գեղարվեստական արտադրանքի վորակը բարձրացնելու համար:

Հրամարակական պայմանադրի կնքելիս, հեղինակի հոնարարի չափը չե կարող ՀԱԱՀ-ի Ժողկոմխորհի կողմից սահմանված դրույքները պահպան լինել, սակայն այդ չի նշանակում, վոր հեղինակը չի կարող պայմանադրում նոխառեսնել Ժողկոմխորհի կողմից սահմանված դրույքներից ավելի բարձր զրույքները:

Որենքի 20 րդ հոդվածը խոսում է միայն հեղինակի հոնարարի նվազագույն պրոյցների մասին, վորից պակաս զրույքներ չեն կարող լինել հեղինակին վտրատրելու համար:

Հեղինակի համար վոչ պակաս կարենը նշանակություն ունի հրամարակչության կողմից հրամարակական պայմանագրով ստացած յերկի հրամարակության իրավունքը այլ անձի դիջելու հարցը: Մեջ մտ թեպետ և չկան մասնավոր հրամարակություններ,

Հեղինակի համար յերենն նշանակություն և ունենում, հրամարակչությունն և իր յերկը լույս ընծայելու: Մասին պարուղ են լինել տարբեր յերկի շատապ հրամարակություններական ամելի կատարելազոր ծիսած հրամարակությունների ամելի ամելի հաջող արագածություն այլին: Այդ նպատակությունը 24-րդ հոդվածությունը անհաջող է անհաջող ամելի ամանը պահպան դրամարժակությունը հրամարակի զրույքը բանական մասնակիությունը ապահովությունը բանական մասնակիությունը:

Հրատարակչական պայմանագրի մասին խոսելիս անհրաժեշտ է կանդ առնել նաև այդ պայմանագրի և յերկի հրատարակության ժամանակամիջոցի հարցերի վրա Համաձայն հեղինակների իրավունքի կանոնադրության 19-րդ հոդվածի՝ հրատարակչական պայմանագիրը կարող է կնքվել և տարուց վորոշի ժամանակով։ Այդ ժամանակը հաշվվում է հրատարակչական պայմանագիրը կնքելու կամ ձեռագիրն ընդունելու որից, յեթե այդ ավելի ուշ և տեղի ունեցել, կամ ընդունման ժամար սահմանվող ժամանակամիջոցները ըրանալու որից, յեթե ձեռագիրն ընդունվելու յերադրության ժամանակից ուշ, իսկ յեթե յերկը բաղկացած է յերկու կամ ավելի հատորներից, այդ դեպքում ժամանակամիջոցը հաշվվում է վերջին հատորի ձեռագիրը հրատարակությանը հանձնելու որից։

Հրատարակության պայմանագրի հիշված 4 տարրի ժամանակամիջոցը չի տարածվում յերաժշտական, յերաժշտական դրամատիկական դործերի, կերպարվեստի, ինչպես նաև լուսանկարչական ու համանման արտազրությունների հրատարակության մասին կնքվող պայմանագրերի վրա։ Խչ վերաբերում և սահմանված ժամանակամիջոցին, վորի ընթացքում հրատարակությունը պարտավոր է յերկը լույս ընծայել, ապա համաձայն հեղինակի իրավունքի որենքի 22-րդ հոդվածի՝ հրատարակչչը պարուագոր և յերկը լույս ընծայել պայմանագրով վարուշված ժամանակամիջոցում, վորը չի կարող համենայն դեպքում ավելի լինել։

ա) պարբերական հրատարակությունների, ինչպես նաև մինչև 5 տպագրական թերթի ծավալով գրքերի համար,—6 տպսից։

բ) մինչև 10 ապագրական թերթի ծավալով այլ պրական յերկերի համար—1 տարուց։

գ) վերոհիշյալ կետերի տակ շընկնող այլ դրական յերկերի համար—2 տարուց։

Այդ ժամանակամիջոցները հաշվվում են հրատարակչական սղայմանագիրը կնքելու կամ ձեռագիրն ընդունելու որից, յեթե ավելի ուշ և տեղի ունեցել։

Անհրաժեշտ է այսուեղ խոսել նույն այն հարցի մասին, թե հրատարակիչը և տեսարանային ձեռնարկությունը իրավունք ունեն հեղինակի յերկի մեջ փոփոխություններ մատնելու տանց նրա համաձայնության, թե վայս Համաձայն հեղինակի իրավունքի հիմունքների 18 բարդ հոդվածի իմաստի, հեղինակի կենդանու-

Այսն ժամանակ հրատարակիչը և տեսարանային ձեռնարկությունը իրավունք չունեն իրենց հայեցողությամբ զորեւ լրացում, կրծառութ և առասարակ փոխառություն մտցնել ինչպես ցերեկի, նույնպես և յերկի վերնադրի ու նրա վրա նշանակած հեղինակի անգան մեջ, առանց հեղինակի համաձայնությունն առանալու հեղինակի կենդանության ժամանակ. առանց նրա իրավունքն ստանալու, հրատարակիչը իրավունք չունի նույնպես նրա յերկին իլլուստրացիաներ կցնելու:

Ի՞նչպես տեսնում ենք հեղինակի յերկը նրա կենդանության ժամանակ որևէնքոյ պաշտպանվում և զորեւ վորփոխության յենթարկություն:

Ի՞նչպես և զորոշվում այս հարցը հեղինակի մահից հետո Այս հարցի պատասխանը տալիս և ՀՍԽՇ-ի հեղինակի իրավունքի որենքի 27-րդ հոդվածը, ըստ վորփի հեղինակի մահից հետո հրատարակիչն իրավունք ունի իր հայեցողությամբ զորեւ փոփոխություն մտցնել յերկի մեջ, առանց հեղինակի ժառանգների համաձայնության: Փախոխություններ մտցնելու վերաբերյալ ժամանցների համաձայնությունը չստանալու գեպքում հրատարակիչը այդ իրավունքը կարող և ստանալ կումբոզկումատից:

Ցեթև հրատարակության բնագավառում յերկը պաշտպանվում և փոփոխությունների յենթարկվելուց ի՞նչպես հեղինակի կենդանության ժամանակ, նույնպես և նրա մահից հետո, ապա յեմակատարման յերկերի բնագավառում այդ պաշտպանությունը կարող և տեղի ունենալ միայն հեղինակի կենդանության ժամանակ: Այդ յերեսում և նրանից, զոր հեղինակի իրավունքի 27-րդ հոդվածը, վորը խոսում և հեղինակի մահից հետո յերկը փոփոխության յենթարկվելուց պաշտպանելու մասին, հիշատակում և միայն հրատարակիչն և վոչ մի խոսք չի տառած տեսարանային ձեռնարկության մասին, այնինչ հեղինակի իրավունքի հիմունքների 18 րդ հոդվածը հեղինակի կենդանության ժամանակ պաշտպանում և յերկը ինչպես հրատարակիչի, նույնպես և տեսարանային ձեռնարկության կողմից փոփոխությունների յենթարկվելուց Այս յերեսը հոգմաների համեմատություններ և վերջուծումից պիտի և դալ այն յեղակացության, զոր հեղինակի մահից հետո, անուարանային ձեռնարկությունը իրավունք ունի գեմակատարման յերկերի մեջ փոփոխություններ առցննելու տևանց հեղինակի ժառանցների համաձայնության:

Բ. Անմտկատուման պայմանագիր

Հեղինակի իրավունքի ստանակի ռատարման ձևերից մեկը՝ հանդիսանում եւ ըհմակատարման պայմանագիրը։ Համաձայն մեջը պրեսի, ընմակատարման պայմանագիրը եւ կոչվում այն պայմանագիրը, վորք դորությամբ հեղինակն իր յերկի հրապարակացին կատարման իրավունքը դիշում ե, իսկ ընմակատարողը (տեսարանային ձևունարկությունը) պարտավորվում ե իրադործիլ նրա ընմակատարությունը (հրապարակացին կատարումը) վորոշված ժամանակամիջոցում։

Բնակակատարման պայմանագիրն իհարկե, յերկի հրապարակության իրավունք չի առաջիս յերկի հրապարակացին կատարման իրավունք։ Բնմակատարման պայմանագիրը, թատրոնի դիրեկցիային հետ, մեծ մասամբ էնքվում և վոչ թե հեղինակի (չնայած նազրեված չի այդ իրավունքից), այլ նրա շահերը ներկայացնող էսդմակերպության կողմէց։ Մեղ մոտ այդ կազմակերպությունը հանդիսանում ե Հայտատանի՝ հեղինակների իրավունքների պաշտպանության վարչությունը (Հայդրամկոմը)։ Յերկու դեպքումն ել ընմակատարման պայմանագրի առարկան հանդիսանում է՝ հեղինակի կողմէց իր յերկերի հրապարակացին կատարման բացառիկ իրավունքը հանձնումը թատրոնի դիրեկցիային։ Բնմակատարման պայմանագիրը կարող է անդի ունենալ միայն այն շնորհատրակիւմ յերկերի նկատմամբ, յերբ նրանց հրապարակացին կատարման բացառիկ իրավունքը պատկանում է հեղինակին։ Որենքի 29-րդ հոդվածը, որակոն պատվերի համանումությամբ, թույլ է առաջիս ընմակատան պատվերի պայմանագրը հնացումը, այսինքն ընմակատարման պայմանագիրը կնքել այնպիսի յերկի վերաբերումները, վորը պայմանագիր կնքելու պահին դեռ որյեկտիվ ձև չի սահցել։

Բնմակատարման պայմանագրի մեջ ակտը և ճշտորեն վորացված լինեն սարավող իրավունքից սղմովելու բնույթը, ժամանելը և պայմանները, մասնավորապես այդ իրավունքից ողափելու տերրիտորիայի սահմանները, այսինքնի ժամանակամիջոցը, առաջին հրապարակացին կրտսելու մասնակամիջոցը, հեղինակի վարձառության չափը և հրապարակացին կատարությունը (ներկայացնելու համերգների) թիվը։

Հեղինակի իրավունքի վերաբերյալ որինքը սահմանում է

նուև բնակատառքման պայմանագրի հետեւալ յերեք պարտավոր պայմանները: Առաջին՝ ընթակատարման պայմանագրը պետք է կուղան լինի յերեք տարուց վոչ ավելի ժամանակով՝ և աշխատ յերեք տասնին հրապարակացին կատարման որից: Յերկըորդ՝ տեսարանային ձեռնարկությունը ուստափոր և յերածառական- ուրատատիկական (ապերաներ, ովերատորներ), խորեոդրանի և յերեք բնակատառքումը իրառութել յերկու տարուց վոչ ուշ՝ և աշխատավոր հիմքում յերեքի ձեռագիրը հեղինակի կողմից հանձնվելու որից, իսկ մասցան բոլոր յերեքին նկատմամբ, մասնավորապես զրամաների՝ մի տարուց վոչ ուշ վերջապես, յերրորդ պայմանը կայանում և նրանուամ, վոր մեկ բնակատարման պայմանագրով մույլ և արդում յերեքի հրապարակային կատարումը իրականացնել միայն մեկ քաղաքի սահմաններում և 150 անդամից վոչ ամենի: Զհրատարակիւած յերկի բնակատարման մասին մի տեսարանային ձեռնարկության հետ կնքված պայմանագրիը հեղինակին չի դրկում մի այլ տեսարանային ձեռնարկության ձեռնարկության հետ նույն յերեքի բնակատարման պայմանագրի կնքելու իրավունքից, յեթե բնակատարմումը իրականացվելու յի տարբեր քաղաքներում մեմակատարման պայմանագրի տերրիտորիայի կանոնից պահանջվությունը կառաջներ մույլ և տալիս բացառություն կառաջներ բանական և կարմիր բանակային ակումբների ուղարկություն իմաստով, վոր հեղինակին իր յերկի բնակատարման իրավունքը կարող և հանձնել այդ ակումբներին, թենիւ նույն այն քաղաքում, վրանու բնակագրումը հեղինակի կողմից արդեն հանձնված և տեսարանային ձեռնարկություններին, սակայն այդ ակումբներում (բանկատական, կորմիր բանակային) չհրատարակիւած յերեքի ընդունությունը կարող և կատարվել միայն հեղինակի հետ կնքված բնակատարման պայմանագրի հիման վրա: Բնակատարման պայմանագրի կնքելին, կողմերը սահմանում են հեղինակի հոնարարի չափը, վորը չի կարող պակաս լինել այն նորմաներից, վորոնց սահմանիած են որենքով:

Յեթե բնակադրությունը և հրապարակային կատարումը չի յերականացվում բնակատարման պայմանագրով կամ որենքով սահմանված ժամանակամիջոցում, այդ դեպքում հեղինակի հայտարարության համաձայն պայմանագրի զարարում և և աւետարանային ձեռնարկությունը պարտավոր և հեղինակին վճարներու պայմանագրոված ամրագջ հանարարը:

Առանձնապես անհրաժեշտ ենք համարում խոսել կինո-սցե-

Նարիկաների ընմակատարման պայմանագրի մասին, վերևում առացինը, վոր տեսաբանային ձեռնարկությունները պարտավոր են յերաժշտական-դրամատիկական և խորեղափիկ յերկերի ընմադրումը իրականացնել յերկու տարրուց վոչ ուշ, իսկ ըուսը մասցած յերկերինը՝ մեկ տարրուց վոչ ուշ, հաշվված յերկերի ձեռակիրը հեղինակի կողմից հանձնելու որից Այս ընդհանուր կանոնից բացառություն և կատարվում կինո-սցենարիաների համար: Սցենարիան ձեռք բերողը պարտավոր չենկարը ցուցադրելու, յեթե պայմանագրում հակառակը չի նախատեսնված: Այս գողխում և հեղինակի իրավունքի որենքի ՅԵ բդ հոդվածից, վորուեղամակած և «Սցենարիան ձեռք բերողը պարտավոր չենկարը ցուցադրելու, յեթե պայմանագրով հակառակը չի վորոշված»:

Կինո-սցենարիաների յեղած այսպիսի բացառությունը բացատրվում է նրանով, որը մեղ մոտ կինո-սցենարիաները մեծ մասամբ ձեռք են բերվում կինո-կազմակերպությունների կողմից՝ սցենարիատների աշխատանքը խրախուսելու համար, չնայած նրան, որը այդ սցենարիաներից շատերը չեն կարող ոգտագործվել կինո-ժապավենների վերածելու համար:

Անհրաժեշտ է հատկապես հաշվի առնել այն հանգամանքը՝ վոր յուրաքանչյուր կինո-սցենարիայի ցուցադրման հետ կապված են խոշոր ծախսեր, բայց այդ կանոնը չի բացառում, վոր պայմանագրի կարգով նախատեսնվի կինո-կազմակերպության պարտավորությունը՝ ցուցադրել կինո-սցենարիան: Այդ գեպագում, եթե կինեմատոգրաֆիկ յերկի ցուցադրումը չակսի ոլայտանագրով վորոշված ժամանակի ընթացքում, տպա հեղինակը միակողմ դիմումի հիման վրա պայմանագիրը լուծվում է, իսկ հեղինակն իրավունք ունի ստանայու պայմանագրված միանվագարձատրությունը: Եթենքանադրութիւնը յերկի համար ընթացկամարման պայմանագիրը չի սահմանափակված ժամանակում

Զերապարակված, թեկուղ և մի անդամ հրապարակորեն կտա-
տարված յերկերի նկատմամբ հեղինակի իրավունքները մի քիչ
առանձման ափակվուծ են: Համաձայն ԽՍՀՄ 1928 թ. մայիսի 16-ի
հեղինակի իրավունքների հիմունքների 8-րդ հոդվածի, չհրապա-
րակված, թեկուղ մի անդամ հրապարակորեն կտարարված, քեմա-
կատարման յերկերի (յերսժատական, դրամատիկական և այլն)՝
նկատմամբ, իրավունք ե վերապահվում համապատասխան հաշվո-
ւով և պետությունների կուսակցության Փազովրդական կուսին:

ըլքատներին՝ թույլատրել այդ յերկերի հըապուրակային կատարումը առանց հեղինակի համաձայնության, վճարելով հեղինակին հոնարար գաշնակից հանրապետությունների որենսդրությամբ սահմանված կարգով:

Հեղինակի իրավունքի հիմունքների 8 րդ հոդվածի հիման վրա, ՀՍԽՀ-ի Լուսմողկոմատը 1933 թ. սեպտեմբերի 28-ին հրատարակել ե մի վորոշում, վորը կարդավորում և չհրատարարակիված, բայց մի անգամ հրապարակորեն կատարված, յերկերի բնմականարման հարցը: Այդ վորաշմամբ նախատեսված է հետեւյալ կարգը՝

ա) յեթե չհրապարակված պիեսը հանդիսանում և վոչ թե ինքնուրույն, այլ թարգմանություն հայերեն լեզվով, այդ գեպաւում նրա հրապարակային կատարումը ԽՍՀՄ-ի բոլոր հայկական թատրոններում ազատ և, առանց թարգմանչից, առաջին բնմադրությունից հետո, վճարելով թարգմանչին համապատասխան հանրապետություններում դոյլություն ունեցող սահմանված նորմաների:

բ) յեթե չհրատարակված պիեսը զրված և հայերեն և հանդիմանում և ինքնուրույն ստեղծագործություն, ապա նրա բնմադրումը հայկական թատրոններում ամրող միութենամեջ ազատ և, առանց հեղինակի թույլտվության, յեթե առաջին բնմադրությունից հետո անցել և մի տարի՝ շրջանային թատրոնների համար և յերկու տարի՝ միության մայրաքաղաքների թատրոնների համար: Հեղինակը ինչպես առաջին, նույնպես և յերկրորդ դեպքում ստուգում և հեղինակի հոնարարը՝ գաշնակից հանրապետությունների լուսմողկոմատների սահմանած կայուն նորմաներով:

